

ՀՈՒՐԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ա. ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ

1986 թ. նոյեմբերի 19-ին Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի Մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի հանձնարարությամբ, չորրորդ կուրսի ուսանողներ Անահիտ Սարդյանը (քննադատության խումբ) և Տիգրան Հակոբյանը (թարգմանչական խումբ, արևմտահայերենից ռուսերեն) կազմակերպել էին երեկո՝ նվիրված Հայ Առաքելական Եկեղեցուն, «Հայ Առաքելական Եկեղեցու անցյալն ու ներկան» թեմայով:

Նրեկոն տեղի ունեցավ ինստիտուտի «Եղիտարար գորոդ» ակումբի հանդիսությունների դահլիճում:

Դահլիճի պատերին փակցված էին Վեհափառ Հայութականի, Մ. Էջմիածնի և Արքարատի գունավոր մեծադիր նկարները: Ցուցափեղենի վրա ներկաների ուշադրությանն էին հանձնվել Մայր Աթոռ Մ. Էջմիածնի տարբեր տարիների հրատարակությունների ցուցանմուշները. գրքեր, ալբոմներ, ամսագրեր, գունավոր նկարներ: Հատուկ շքեղությամբ էին ներկայացված ներկա և պատմական Հայաստանի բազմաթիվ ներկանեցիների և վանական շինույթունների վերատպությունները: Հնոյն է ՀՍՍՀ ժող. արտիստութիւն Լուսինն Զաքարյանի հոգևոր երգեցողությունը:

Նրեկոյին ներկա էին ինստիտուտի դասախոսներ, Մոսկվայում Հայաստանի հիմնական ներկայացուցչության աշխատակից Արկադի Աթաքելյանը և մեծ թվով ռուս ուսանողնություն:

Նրեկոն բաղկացած էր երկու մասից. Հայ Եկեղեցին սկզբից մինչև 1920 թ., և 1920 թ.-ից հետո մինչև մեր օրերը:

Խոսկով Հայ Եկեղեցու դերի ու նշանակության մասին, զեկուցողները հիմնականում շնչութ դրեցին Հայ Եկեղեցու ազգա-

յին-հայրենասիրական և գիտա-մշակութային գործունեության վրա:

Անահիտ Սարդյանն իր խոսքում կանգ առավ Հայ Եկեղեցու պաշտոնական անվան ծշտման հարցի վրա, որը, ինչպես նա նշեց, տարբեր ժամանակներում օտարների կողմից, երբեմն նաև հայերի անտեղյակ շրջանակներում, կոչվել է «Լուսավորչական», «Գրիգորյան» (կապված Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ) սխալ անվանմաններով, սուպարարական մատնելով «Առաքելական» անվանումը, որն էլ իր հերթին ատիթ է տվել Հայ Եկեղեցուն ոչ ողջափառ ընկալելուն:

Նա անդրադարձավ Հայ և Ռուս Եկեղեցիների դավանաբանական տարբերություններին, ծանրանալու հիմնականում Քաղկեդոնի ժողովի վրա: Խոսկով Հայաստանում գրերի գյուտի, թարգմանական գրականության դերի և նշանակության մասին, նա ասաց. «Քրիստոնեության հանդեպ ունեցած հոգևոր մոտիկությամբ միայն կարելի է բացարձել մեր մշակույթի և դրայի բույն ծաղկումը: Ե դարը հայ ժողովունակության տվեց բազմաթիվ գիտնականներ, պատմիչներ, փիլիսոփաներ և բանաստեղծներ: Նրանց գիտական և գեղարվեստական գործունեությունը դուրս է գալիս ազգային շրջանակների սահմաններից:»

Մեր ժողովորդի բազմադարյան պատմության ընթացքում Հայ Եկեղեցին մեծ դեր է ունեցել ժողովորդի, նրա լեզվի և մշակույթի պահպանման գործում»:

Նրեկոյի երկրորդ մասը ներկայացրեց Տիգրան Հակոբյանը:

Նա անդրադարձավ սովետական շրջանում Հայ Եկեղեցու կատարած գործունեությանը: Խոսեց Համաշխարհային երկրորդ թյան, ուսումնակատին «Սասունցի Դաւագատերակմի ամառավոր օրերին Հայ Եկեղեցու վարած խաղաղափրական բաղաքանություն» տանկային շարապյուն նվիրելու, եր-

շանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի ազգօգուտ գործունեության և նրա շանքերով հայրենի հանգրվան վերադարձած հազարավոր հայերի ներգաղթի մասին:

Այսուհետև նա ներկաներին ծանոթացրեց Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա Հայրապետի Յ0 տարիների կատարած եկեղեցաշեն և ազգանվեր գործունեությունը, պատմեց Վեհափառ Հայրապետի օրոք Մայր Հայրենիքում և Սփյուռքում հոգևոր, եկեղեցական և հայրենասիրական կյանքի մասին:

Խոսելով Վեհափառ Հայրապետի խաղաղասիրական գործունեության մասին, բնորոշեց նրան որպես «նոր ժամանակների խաղաղության առաջապես»:

Իր խոսքի վերջում նա ցուցադրեց Հայաստանի եկեղեցիներին, խաչքարային արվեստին և մամրանկարչությանը վերաբերող պայդներ՝ ցուցադրվող պատկերների մասին համառոտ ծանոթություններով:

Բ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՋԹՔ

Սույն թվականի հունվարի Յ0-ին, ուրաք օրը, «Ամենայն սրբոց» ոուսական եկեղեցուն տեղի ունեցավ Էկումենիկ աղոթք:

Աղոթքին հրավիրվել էին Ռուս Պատրիարքի մոտ Անտիկոքի պատրիարքության ներկայացուցիչ Նիֆոն վարդապետը, Բոլոնյարայի պատրիարքության ներկայացուցիչ Գավիլի վարդապետը, Մոսկվայի հոռմանական կաթողիկ եկեղեցու քահանա Ստանիսլավ Մաժեցկան, ԳՖՀ-ի դեսպանատան հոգևորական պատուր Հանն Պետեր Ֆրիդրիխը, ԱՄՆ-ի դեսպանատան հոգևորական Նորման քահանա Մայքլոնը (Կաթոլիկ), երկու ներկայացուցիչ ՀԱՔԲՄ-ից (Համաշխարհային Ավետարանական Քրիստոնյա

Բարտիստների Միություն) և մեկ ներկայացուցիչ Սովետականական կրոնական կազմակերպություններից:

Հրավիրավների թվում էր նաև Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ Նոր Նախիչևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ, Ռուս Պատրիարքի մոտ Հայոց Հայրապետության մշտական ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Տիրան վոր. Կյուրելյանը:

Սղոթքին մասնակցում էին նաև Ռուս եկեղեցու արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի, հրատարակչական և տնտեսական բաժնի, Մոսկվայի պատրիարքության գործերի վարչության և Մոսկվայի հոգևոր Ակադեմիայի ներկայացուցիչներ՝ Ֆեռնան եպիսկոպոսի գլաւուրությամբ:

Քրիստոնեական միության համար կատարված աղոթքի թեման էր՝ «Բայց եթէ ի՞նչ ի Քրիստոս. Առ արարած ից!» (ԲԿոր Աթ. Ե.17):

Եկեղեցու վաճառհայր ավագ քին. Բորբովյի բացման խոսքից հետո սկսեց Էկումենիկ աղոթքը:

Հայ Տիրանը ընթերցում է Կորնթացիների Բ թղթի Ե գլխի 17—20 համարները, որից հետո շարունակվում է աղոթքը՝ ըստ ծրագրված հաշորդականության:

Աղոթքի վերջում հրավիրյալ ներկայացուցիչներն իրենց եկեղեցիներում ընդունված պաշտոնական լեզուներով ընթերցեցին աղոթքներ՝ ազատ ընտրությամբ: Հայ Տիրանը ընթերցեց Ար. Ներսես Շնորհալու «Հայատով խոսողվանիմ» հոգեշունչ աղոթքից մի հատված: Էկումենիկ աղոթքն անցավ քրիստոնեական խաղաղության, եղբայրության և սիրո մժնողորտուն:

